https://doi.org/10.46991/hc.2023.19.1.052

The Lessons of 1920 and the Imperative of Comprehending them

Ashot Hayruni
https://orcid.org/0009-0001-5026-7315
Professor at YSU Chair of Armenian History, Doctor of History
ashot.hayruni@ysu.am

Keywords: Soviet Russia, Chicherin, Sarikamish, Legran, Kars, Kemal, Treaty of Sevres, Ohanjanian, Stalin, St. Ghorghanyan, Treaty of Alexandropol.

The article covers the events of 1920 and a number of mistakes made by the military-political leadership of the first republic of Armenia, which had disastrous consequences. From the April of 1920, when Soviet Russia re-entered the region, Armenia had new opportunities, the utilization of which could provide real advancements. Unfortunately, the Armenian government failed to perceive and assess the new regional geopolitical processes caused by Russia's accession, although Russia, in turn, was deeply interested in cooperation with Armenia. The RA government's policy of refusing to cooperate with Russia and relying on the Entente allies, in particular Great Britain, greatly helped M. Kemal in implementing his plan to invade Armenia.

The article also explains the situation in Kars Province during the Turkish invasion and the factors that played a significant role in the war and the shameful defeats of the Armenian army on the Kars front. The root cause of these defeats was the demoralization of the Armenian troops, which in turn was due to the corrupt activities of the higher military command in Kars, particularly generals Hovsepian and Bek-Pirumian, who, despite the reports sent to Yerevan by the governor of Kars regarding their negligence, were supported by the Defense Minister R. Ter-Minasian and thus, left unpunished, that is why there were unable to organize the resistance.

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-1(19), 2023, pp. 52-71

Received: 21.02.2023

Revised: 12.03.2023

Accepted: 15.06.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2023

1920 թվականի դասերը և դրանց յուրացման հրամայականը

Աշոտ Հայրունի
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.դ.

Հիմնաբառեր՝ Խորհրդային Ռուսաստան, Չիչերին, Սարիղամիշ, Լեգրան, Կարս, Քեմալ, Սևրի պայմանագիր, Օհանջանյան, Ստալին, Ս. Ղորղանյան, Ալեքսանդրապոլի պայմանագիր:

Հոդվածում լուսաբանվում են 1920 թ. Հայաստանի առաջին հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության թույլ տված մի շարք սխալները, որոնք ունեցան աղետալի հետևանքներ: 1920 թ. ապրիլից, երբ Խորհրդային Ռուսաստանը վերստին մուտք էր գործում տարածաշրջան, Հայաստանի համար ի հայտ էին գալիս նոր հնարավորություններ, որոնց օգտագործումը կարող էր իրական ձեռքբերումներ ապահովել: Ցավոք, ՀՀ կառավարությունն անկարող եղավ՝ ընկալելու և գնահատելու Ռուսաստանի մուտքով պայմանավորված տարածաշրջանային նոր աշխարհաքաղաքական զարգացումները, չնայած Ռուսաստանն իր հերթին խորապես շահագրգռված էր Հայաստանի հետ համագործակցելու հարցում: ՀՀ կառավարության՝ Ռուսաստանի հետ համագործակցությունից հրաժարվելու և Անտանտի դաշնակիցներին, մասնավորապես Անգլիային ապավինելու քաղաքականությունը մեծապես օգնեցին Մ. Քեմալին Հայաստանի զավթման իր ծրագիրն իրականացնելու հարցում: Հոդվածում պարզաբանվում են նաև թուրքական ներխուժման օրերին Կարսի նահանգում տիրող իրադրությունը և այն գործոնները, որոնք նշանակալից դեր ունեցան պատերազմի ընթացքի և Կարսի ճակատում հայկական բանակի խայտառակ պարտությունների հարցում: Այդ պարտությունների բուն պատճառը հայկական զորքերի բարոյալքվածությունն էր, ինչն իր հերթին պայմանավորված էր Կարսի ռազմական բարձրագույն հրամանատարության, մասնավորապես գեներալներ Հովսեփյանի և Բեկ-Փիրումյանի ապիկար գործունեությամբ, որոնք, չնայած նրանց անօրինականությունների վերաբերյալ Կարսի նահանգապետի՝ Երևան ուղարկած զեկուցագրերին, վայելում էին ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանի հովանավորությունը և այդպիսով մնալով անպատիժ՝ ձախողեցին դիմադրության կազմակերպումը:

Уроки 1920 года и необходимость их усвоения

Ашот Айруни
доктор исторических наук, профессор кафедры истории Армении ЕГУ

Ключевые слова: Советская Россия, Чичерин, Саракамыш, Легран, Карс, Кемаль, Севрский договор, Оганджанян, Сталин, Степан Горганян, Александропольский договор.

В статье освещаются события 1920 года и ряд ошибок, допущенных военно-политическим руководством Первой Республики Армении, имевших катастрофические последствия. Когда в апреле 1920 года Советская Россия вновь вошла в регион, у Армении появились новые возможности, использование которых могло обеспечить реальные достижения в республике. Однако, правительство РА не смогло в полной мере воспринять и оценить новые региональные геополитические процессы, вызванные вступлением России, хотя Россия, в свою очередь, была глубоко заинтересована в сотрудничестве с Арменией. Правительство РА отказалось от содружества с Россией и, полагаясь на союзников Антанты, в частности на Англию, позволило М. Кемалю осуществить план его вторжения в Армению.

В статье также разъясняется положение Карсской губернии в дни турецкого нашествия, факторы, сыгравшие значимую роль в ходе войны, и сокрушительное поражение армянских войск на Карском фронте. Первопричиной этих поражений была деморализация армянских войск, что, в свою очередь, было связано с бездарной деятельностью высшего военного командования Карса. В частности дело касалось генералов Овсепяна и Бек-Пирумяна, которые, несмотря на доклады, направленные в Ереван губернатором Карса относительно их беззаконий, пользовались благосклонностью и покровительством министра обороны Р. Тер-Минасяна и, таким образом, оставшись безнаказанными, не смогли организовать сопротивление.

* * *

Ներածություն: 1920 թ. իրադարձությունների գնահատման հարցում հայ պատմագրության մեջ, ցավոք, դեռևս միասնական հայեցակետ չի ձևավորվել, և տեսակետները հաճախ բեկվել են: Բազմաթիվ ուսումնասիրողներ հակված են եղել թերագնահատելու ու նսեմացնելու ՀՀ քաղաքական և ռազմական ղեկավարության թույլ տված սխալները՝ դրանց հետևանքներով հանդերձ, և փոխարենը գերագնահատվել է ռուս-թուրքական համագործակցությունը, ստեղծվել դավադրության հայտնի տեսությունը, որին զոհ գնաց Հայաստանը, մինչդեռ դա չի համապատասխանում իրականությանը: Մենք փորձել ենք հոդվածի սուղ ծավալում ակներև դարձնել վերոնշյալը և բացահայտել Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարության այն բացթողումներն ու թերացումները, որոնք անշրջելի դարձրին հայտնի աղետալի իրադարձությունները: Դրանք պայմանավորված էին ինչպես Հայաստանի միանշանակ արևմտյան քաղաքական կողմնորոշմամբ, որն անտեսում էր Խորհրդային Ռուսաստանի՝ տարածաշրջան մուտք գործելուց հետո Հայաստանին ընձեռված բազմաթիվ հնարավորությունները, այնպես էլ Կարսի ճակատում հայկական բանակի մարտունակության բացակայությամբ, որն ի հայտ էր եկել այնտեղի հայ ռազմական բարձր հրամանատարության ապիկար գործելակերպի հետևանքով:

Խորհրդային Ռուսաստանի հետ համագործակցության շարունակական ձախողումը: 1920 թ. գարնանը, երբ կարմիր բանակը, ջախջախելով Դենիկինին, մոտեցել էր Կովկասին, Ռուսաստանը վճռել էր իր ձեռքում պահել Հայկական հարցի լուծումը՝ այդպիսով տարածաշրջանում ապահովելով նաև սեփական քաղաքական գերակայությունը: Ապրիլին, երբ Քեմալն առաջին անգամ օգնության գրավոր խնդրանք ուղղեց Լենինին, նա միաժամանակ

Ադրբեջանի խորհրդայնացման հարցում իր ծառայությունն էր առաջարկում և ներկայացնում Հայաստանի դեմ պատերազմ սկսելու իր մտադրությունը: «Եթե խորհրդային ուժերը նախատեսում են ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ,– գրում էր նա ապրիլի 26-ի իր նամակում,– կամ դիվանագիտական ճանապարհով իրենց ազդեցության միջոցով Վրաստանին կստիպեն դաշինքի մեջ մտնել ու ձեռնարկել անգլիացիների վտարում Կովկասի տարածքից, թուրքական կառավարությունը իր վրա է վերցնում պատերազմական գործողությունները իմպերիալիստական Հայաստանի դեմ և պարտավորվում է ստիպել Ադրբեջանի հանրապետությանը մտնելու խորհրդային պետության շրջանակի մեջ» [Արզումանյան, 1973, 299]:

Ռուսաստանը մերժեց Հայաստանի դեմ պատերազմ սկսելու գաղափարը՝ իրեն վերապահելով հայ-թուրքական խնդիրների կարգավորումը [Հայաստանը միջազգային դիվանագիտության, 1972, 448, Ալիխանյան, 1966, 113]:

Նույն ապրիլին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը հանդես եկավ Հայաստանի և Վրաստանի հետ երկկողմ հարաբերությունների հաստատման նախաձեռնությամբ՝ առաջարկելով սկսել բանակցություններ՝ խաղաղության ու բարեկամության պայմանագրեր ստորագրելու համար: Վրաստանը շտապ մի պատվիրակություն ուղարկեց Մոսկվա, որը 6 օրում հասավ այնտեղ, և հունիսի 7-ին Ռուսաստանի հետ ստորագրելով պայմանագիր, որով վերջինս ճանաչում էր նրա անկախությունը, վերադարձավ [Խատիսյան, 2018, 283]:

Ապրիլի վերջին հայկական պատվիրակությունը՝ Լ. Շանթի ղեկավարությամբ, նույնպես ուղևորվեց Մոսկվա: Չնայած ռուսական կառավարությունը ձգտում էր բանակցությունները և պայմանագրի կնքումը հնարավորինս արագ իրականացնել ու այդ նպատակով նույնիսկ առաջարկել էր պատվիրակությանը ճեպընթաց գնացք տրամադրել, վերջինս գործընթացը ձգձգելու ակնհայտ նպատակադրվածությամբ մեկնեց այլ երթուղով և միայն 26 օրում հասավ Մոսկվա [Կարինյան, 1926, 23-24]: Կարևոր է նկատի առնել, որ ռուսական կառավարության շտապողականությունը պայմանավորված էր ոչ միայն Հայկական հարցի լուծումը, հայ-թուրքական տարածքային սահմանազատումն իր ձեռքը վերցնելու և այդ կերպ Անտանտին տարածաշրջանից մեկուսացնելու, այլև նախքան քեմալականների հետ բանակցությունների սկսումը հայկական կողմի հետ համաձայնության գալու մտադրությամբ: Հայկական կողմը, սակայն, որդեգրել էր բանակցությունները ձգձգելու և այդ կերպ ձախողելու քաղաքականություն, չնայած Ռուսաստանը հանձն էր առնում ոչ միայն ճանաչել Հայաստանի Հանրապետության անկախությունը, այլև հայ-թուրքական խնդիրների կարգավորման հարցում Ռուսաստանի միջնորդությունն ընդունելու դեպքում նրան միավորել Արևմտյան Հայաստանից որոշ տարածքներ, ապահովել ելք դեպի Սև ծով, ավելին՝ հայկական կողմի համար նպաստավոր կերպով գծել հայ-ադրբեջանական սահմանը [Տերտերեան, 1954, 14]: Այդ ամենը հայկական կողմից ըմբռնում չգտավ, և չնայած Մոսկվայում սկսված հայ-ռուսական բանակցությունները հայկական կողմի ձգձգումների հետևանքով ձախողվեցին, հուլիսին Մոսկվայում սկսված ռուս-թուրքական բանակցությունների ժամանակ ևս Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինը թուրքերից պահանջում էր Հայաստանին որոշակի տարածքներ տալ Վանի ու Բիթլիսի նահանգներից: Օգոստոսի 24-ին Մոսկվայում նախաստորագրված ռուս-թուրքական համաձայնագիրը թուրքական Ազգային մեծ ժողովը չվավերացրեց ռուսական կողմի այդ պահանջների պատճառով [Գալոյան, 1999, 264, Լազեան, 1991, 252-253]:

Ուշագրավ է, որ, ինչպես Համբարձում Տերտերյանն է տեղեկացնում, 1920 թ. ամռանը խորհրդային Ռուսաստանի կառավարության հանձնարարությամբ ռազմական շտաբը պատրաստել էր նաև անդրկովկասյան հանրապետությունների սահմանագծման մի քարտեզ, որը, որպես «պլան բ», նախատեսված էր իրականացնել այն պարագայում, եթե Արևմտյան Հայաստանից տարածքներ չհատկացվեին Հայաստանի Հանրապետությանը: Ըստ այդ պլանի՝ Հայաստանի սահմաններում էին ներառվելու ոչ միայն, այսպես կոչված, երեք վիճելի շրջանները, այլև Ադրբեջանի զբաղեցրած բազմաթիվ տարածքներ, նաև Բաթումը՝ իր նավահանգստով: Այդպիսով Հայաստանը դառնալու էր Անդրկովկասում ամենամեծ հանրապետությունը, իսկ Ադրբեջանը սահմանափակվելու էր գրեթե միայն Ապշերոնյան թերակղզում [Տերտէրեան, 1954, 19]:

Հուսալով Հայաստանի հետ համաձայնության գալ՝ Ռուսաստանը վճռականորեն խափանում էր Հայաստանի վրա հարձակվելու քեմալական ծրագրերը: Հայ-ռուսական բանակցությունները Մոսկվայում սկսվել էին, երբ Քեմալը Ռուսաստանի հետ ցամաքային կապ ապահովելու պատճառաբանությամբ հունիսին որոշեց հարձակվել Հայաստանի վրա [Տեր-Յակոբեան, 1921, 19]: Հարձակումը կանխվեց Խորհրդային կառավարության արգելքի շնորհիվ [Տեր-Յակոբեան, 1921, 19, Վրացյան, 1993, 487-488, Զոհրաբյան, 1979, 40-41], իսկ Քեմալը ստիպված եղավ ընդունել Հայաստանի հետ Թուրքիայի սահմանազատման հարցում Ռուսաստանի միջնորդությունը, ինչը Հայաստանի կառավարությունը հրաժարվում էր անել [Տեր-Յակոբեան, 1921, 11-12]: Վերջինս, Չիչերինից տեղեկանալով Հայաստանի վրա թուրքական հարձակումը Ռուսաստանի կողմից արգելելու մասին, դրանից ևս հետևություններ չարեց (ՀԱԱ, թ. 203):

Քանի որ Մոսկվայում հայկական պատվիրակության հետ բանակցությունները վերջինիս անգործության հետևանքով շարունակ ձգձգվում էին, Չիչերինը վճռեց Լեգրանի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել Հայաստան՝ դրանք Երևանում շարունակելու համար: «Այստեղ,– գրում էր Չիչերինը հուլիսի 19-ին Բ. Լեգրանին,– «բանակցություններն այդ ուղղությամբ նրանց հետ անհույս են: Մենք ամեն ինչի կարող ենք հասնել միայն Հայաստանում» [Ալիխանյան, 1966, 109-110]: Նույն օրը Չիչերինը հեռագրով Հ. Օհանջանյանին տեղեկացրեց, որ բանակցությունները փոխադրվում են Երևան՝ հույս հայտնելով, որ Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի ժամանումը Երևան կնպաստի բոլոր հարցերի շուրջ համաձայնության գալուն և երկու երկրների միջև բարեկամական պայմանագիր ստորագրելուն: Չիչերինը միաժամանակ ընդգծում էր, որ խորհրդային կառավարությունը թուրքական ազգային կառավարության հետ հաստատվող բարեկամական հարաբերությունները օգտագործում է նաև այն բանի համար, որ «հայ ժողովրդի համար հնարավորություն ապահովի իր զարգացման համար բավականաչափ տերիտորիա ձեռք բերելու Փոքր Ասիայում», և որ «հայ ժողովուրդը կարող է հույս դնել նրա (Խորհրդային Ռուսաստանի – Ա. Հ.) նրա մշտական բարեկամական վերաբերմունքի ու նրա ուժերի սահմաններում՝ նրա օգնության վրա՝ հայ ժողովրդին սպառնացող նոր արյունալի աղետները կանխելու համար» (ՀԱԱ, թ. 203):

Օհանջանյանը Չիչերինին պատասխան հեռագրով հայտնում է, որ ինքը դեմ չէ բանակցությունները Երևան փոխադրելու առաջարկին, բայց դրանք կարող են սկսվել միայն

Շանթի պատվիրակության վերադարձից հետո [Վրացյան, 1993, 484]։ Եվ քանի որ Օհանջանյանն ու իր կառավարությունը շարունակում էին Ռուսաստանի հետ բանակցություններից խուսափելու և դրանք ձգձգելու քաղաքականությունը, պատվիրակությունը, բնականաբար, դարձյալ պետք է հնարավորինս ուշացումով գար Երևան։ Այդպես էլ եղավ։ Երկար ժամանակ Մոսկվայում անգործ սպասելով կառավարության հրահանգին, որ վերադառնան Երևան, պատվիրակության անդամներն ի վերջո Մոսկվայից ճանապարհ ընկան օգոստոսի 10-ին [Տերտէրեան, 1954, 26], որից հետո երկար կանգ առնելով Ռոստովում ու այլ վայրերում՝ Երևան հասան ավելի քան մեկ ամիս անց՝ սեպտեմբերի 14-ին [Վրացյան, 1993, 485]։ Մինչդեռ պատվիրակությունը շտապելու ցանկություն ունենալու դեպքում հնարավորություն ուներ Լեգրանի և նրա պատվիրակության հետ միասին նույն գնացքով վերադառնալու Հայաստան։ Դրա համար անհրաժեշտ էր միայն այդ ցանկությունը ներկայացնել խորհրդային կողմին։ Դա տեղի չունեցավ, իսկ եթե նույնիսկ վերջինս առաջարկեր Լեգրանի հետ նույն գնացքով մեկնել, ապա, ըստ Շանթի, իրենք դա չէին ընդունի, քանի որ իրենց՝ որպես անկախ երկրի ներկայացուցիչների «քաղաքացիական հպարտությունն ու քաղաքականությունը» դա թույլ չէին տա։ «Մենք միշտ պահած ենք մեզի իբրև անկախ երկրի մը անկախ դեսպանություն,– գրում էր նա հետագայում Ս. Վրացյանին,– և ո՛չ մեկ պայմանով Լեգրանի մը թևարկության տակը չէինք մտներ։ Իսկ ետ դառնալու որևէ հապճեպ չունեինք այս աստիճանի. մենք մեր դերը արդեն ավարտած կհամարեինք, բոլոր էական խնդիրներու շուրջ մանրամասն զեկուցումներ ղրկած էինք մեր կառավարության և կկարծեինք, որ Լեգրանի հետ մեր կառավարությունը ինքը կխոսի Հայաստանի մեջ» [Ալիխանյան, 1966, 648]։

Պատվիրակության վերադարձը, այդպիսով, ձգձգվում էր։ Մինչ այդ Լեգրանը, ստանալով ՀՀ կառավարության հետ բանակցելու և պայմանագիր կնքելու՝ Լենինի ու Կարախանի ստորագրությամբ վավերացված լիազորագիրը, հուլիսի կեսին իր պատվիրակության հետ միասին ժամանեց Բաքու, ապա ուղևորվեց Երևան։ Հասնելով Աղստաֆա՝ նա ցանկացավ այնտեղից մեկնել Երևան, սակայն վարչապետ Օհանջանյանը մերժեց նրանց հանրապետություն մուտք գործելու արտոնություն տալ՝ պատճառաբանելով, թե Շանթի պատվիրակությունն է նրանց հետ շարունակելու բանակցությունները, և պետք է նախ սպասեն այդ պատվիրակության վերադարձին։ Հինգ օր Աղստաֆայում սպասելուց հետո Լեգրանը ստիպված եղավ մեկնել Թիֆլիս [Ալիխանյան, 1966, 120]։ Որպես Հայաստանում ռուսական պաշտոնական ներկայացուցչություն՝ Երևան ուղարկված Լեգրանն ու իր պատվիրակությունը, այդպիսով, ստիպված էին երկար ժամանակ մնալ Թիֆլիսում և Բաքվում՝ Հայաստանի կառավարության հետ լավագույն դեպքում միայն հեռակա կապ պահպանելով։

Քեմալականների՝ Հայաստանի հետ համաձայնության գալու փորձերն ու դրանց ձախողումը։ Ռուսաստանի՝ մի կողմից Սևրի պայմանագրից, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետությանը նոր տարածքներ հատկացնելու դիրքորոշումից մտահոգված՝ Քեմալը փորձում էր համաձայնության գալ հայկական կողմի հետ։ Դեռ հունիս ու հուլիս ամիսներին քեմալական կառավարության արտգործժողկոմ Սամին հանդես եկավ նման նախաձեռնությամբ՝ երկու պաշտոնական նամակներ ուղարկելով Հայաստանի կառավարությանը [ՀԱԱ, թ. 18]։ Հայաստանի արտգործնախարարության ընդհանուր քարտուղարի ստորագրությամբ նրան ուղարկված պատասխան նամակներում հայկական կողմը հրաժարվեց բանակցել քեմալական կառավարության հետ [ՀԱԱ, թ. 16, 19]։ Թուրքական կողմը հուլիսին անպաշտոն

բանակցություններ էր վարել նաև Կ. Պոլսում գտնվող Ա. Խատիսյանի հետ՝ խոստանալով որոշ տարածքներ հատկացնել Հայաստանի Հանրապետությանը [Խատիսյան, 2018, 257]։ Դա նույնպես հայկական կողմից որևէ գործնական արձագանք չստացավ։

Թուրքական կողմն օգոստոսին հանդես եկավ ևս մի նախաձեռնությամբ՝ 2 հոգուց բաղկացած մի պատվիրակություն ուղարկելով Երևան։ Պատվիրակներից մեկը ներկայացավ որպես քեմալական կառավարության, իսկ մյուսը՝ Կ. Պոլսի օրինական կառավարության լիազոր ներկայացուցիչ։ Հայտարարելով, որ իրենք հանդես են գալիս որպես երկու կառավարությունների միասնական պատվիրակություն՝ նրանք առաջարկեցին մերժել Սևրի պայմանագիրը և երկկողմ պայմանագիր կնքել Հայաստանի Հանրապետության սահմանների վերաբերյալ, որի տարածքը, ինչպես նրանք խոստանում էին, ընդարձակվելու էր՝ հասնելով Վան, այնտեղից բարձրանալով հյուսիս՝ հասնելու էր Սև ծով, որտեղ Ռիզեի նավահանգիստը նույնպես տրվելու էր Հայաստանին։ Թուրք պատվիրակները ջանքեր էին գործադրում՝ Հայաստանի կառավարությանը համոզելու ընդառաջել իրենց առաջարկին։ Եթե վերջինս որոշեր թուրքական այդ մեկնարկային առաջարկի շուրջ բանակցել, հավանաբար կկարողանար է՛լ ավելի շահեկան պայմաններով համաձայնության հասնել։ Թուրք պատվիրակների առաջարկը, սակայն, առանց բանակցելու մերժվեց, քանի որ Սևրի պայմանագրով անհամեմատ ավելի մեծ տարածքներ էին խոստացվել Հայաստանին։ Թուրք պատվիրակները ձեռնունայն հեռացան՝ «իրենց հետ տանելով բացարձակ մերժում» [Տէր Յակոբեան, 1921, 18-19]։ Ինչպես գրում է Կ. Սասունին, Հայաստանի կառավարությունը, «շլացած քաղաքական խիստ նպաստավոր պայմաններէ՝ Դաշնակիցներուն հավատալով», հույս ուներ, թե պիտի կարողանա «անմիջապես օգտվիլ այս թուղթէ զենքէն» [Սասունի, 1969, 24-25] (նկատի ունի Սևրի պայմանագիրը – Ա. Հ.)։

Քեմալը ստեղծված իրավիճակում այլ ելք չէր տեսնում, քան օր առաջ հարձակվել Հայաստանի վրա և ջախջախելով նրան՝ անիրագործելի դարձնել Սևրի պայմանագիրը։ Առավել ևս, որ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման հարցում Հայաստանի կառավարության կողմից Ռուսաստանի միջնորդության մերժումը և վերջինիս հետ բանակցությունների ձգձգումը նվազեցնում էին հարձակման դեպքում Ռուսաստանի հայանպաստ միջամտության հավանականությունը։

Թուրքական ներխուժումը և հայկական բանակի անկարողությունը։ Քեմալական հարձակման դիվանագիտական նախապատրաստությանն էր ծառայում սեպտեմբերի 1-7-ը Արևելյան ժողովուրդների՝ Բաքվում կազմակերպված համագումարը։ Սեպտեմբերի 17-ին Արևելքի ժողովուրդների քարոզչության և գործողությունների խորհրդի նախագահությունն ընդունեց որոշում, ըստ որի՝ Անգլիայի օգնությամբ Հայաստանը, դաշնակցած Վրաստանի և Պարսկաստանի հետ, պատրաստվում էր հարձակվել Խորհրդային Ադրբեջանի վրա, և եթե անհապաղ չկանխարգելվի այդ վտանգը, կճնշվի նաև թուրքական հեղափոխական շարժումը, ինչը կհանգեցնի ողջ Արևելքում հեղափոխական շարժումների ճնշմանը։ Դրանից խուսափելու համար անհրաժեշտ էր համարվում թուրքական զորքերով հարձակվել Հայաստանի վրա։ Այդ որոշումն անմիջապես ուղարկվեց Երկրորդ ինտերնացիոնալի գործադիր կոմիտե, ՌԿ(բ)Կ կենտկոմ և Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմիսարիատ։ Ռուսաստանը, որի՝ հայկական կողմի հետ

երկխոսելու և փոխըմբռնման գալու փորձերը ձախողվում էին, այս անգամ չառարկեց պայմանով, որ թուրքերը Սարիղամիշ–Շահթախտ գիծը չեն անցնելու։ Քեմալը միաժամանակ գործուն քայլեր էր ձեռնարկում Հայաստանի վրա հարձակման ժամանակ Վրաստանի չեզոքությունն ապահովելու համար։ Նա Բաքվում գտնվող Ռեմզի փաշային ծածկագիր անթել հեռագրով հանձնարարելով թաթար բոլշևիկներին «շահել յօգուտ թրքական դատի»՝ համագումարի պատվիրակ Յուսուֆ Քեմալ բեյին «գաղտնի յանձնարարութիւններով» ուղարկեց Թիֆլիս։ Վերջինս այնտեղ հանդիպում ունեցավ Վրաստանի վարչապետ Ժորդանիայի և արտգործնախարար Գեգեչկորու հետ, որը տևեց մեկ ժամ և եզրափակվեց ճաշկերույթով։ Այնուհետև տեսակցելով Թիֆլիսում խորհրդային դեսպանի հետ՝ Յուսուֆ Քեմալը վերադարձավ և իր այցի արդյունքների մասին զեկուցեց թուրքական պատվիրակության նախագահ Բեքիր Սամիին։ Վերջինս նախքան Քեմալին տեղեկություն ուղարկելը խորհրդակցեց նաև խորհրդային պատվիրակության հետ և Բաքվից Անկարա ուղարկեց հեռագիր՝ «ճանապարհները բաց են» վերտառությամբ [«Մշակ», 1920]։

Հեռագրի ենթատեքստը, անկասկած, մեկնաբանության կարիք չունի։ Այն, որ քեմալականները Հայաստանի վրա հարձակումը նախապես համաձայնեցրել էին Վրաստանի հետ, հետագայում վկայել է նաև Քյազիմ Կարաբեքիրը Խատիսյանի հետ զրույցում։ «Դեռ հայերի դեմ պատերազմական գործողություններ սկսելուց առաջ,– ասել էր նա,– Անկարայի ներկայացուցիչները, ի դեմս Յուսուֆ Քեմալ բեյի և Ալի Ֆուադ փաշայի, 1920 թվի ամռանը եղան Թիֆլիսում և վրաց կառավարության հետ դաշն կապեցին, որի զորությամբ Վրաստանը հայ-թուրքական պատերազմ ծագելու պարագայում պետք է չեզոքություն պահեր և դրա փոխարեն պետք է ստանար Բորչալուի և Ախալքալակի գավառները և Արդահանի շրջանը» [Խատիսյան, 2018, 345]։ Ինչպես նշում է Խատիսյանը, Կարաբեքիրը նրան նույնիսկ ցույց էր տվել այն քարտեզը, որի վրա գծված էին Վրաստանի սահմանները՝ համաձայն չեզոքության մասին պայմանագրի [Խատիսյան, 2018, 345][1]։ Քեմալին այլևս ոչինչ չէր խանգարում՝ հարձակվելու Հայաստանի վրա։ Հայ-ռուսական փոխհամաձայնության հասնելու այնքան թանկագին ժամանակը շարունակում էր բաց թողնվել, մինչդեռ հայկական կողմի դիվանագիտական անճարակությանը գումարվում էր նաև ռազմականը։ Երբ թուրքական բանակը սեպտեմբերին անցավ հարձակման, Կարսի ճակատի հրամանատարությունը, ի դեմս գեներալներ Բեկ Փիրումյանի և Հովսեփյանի, ի հայտ բերեց պատերազմելու բացառիկ անկարողություն։ Նրանք ձախողեցին մինչև իսկ Կարսի պաշտպանությունը, որի համար նախապատրաստական որևէ աշխատանք չէր կատարվել։ Երկու գեներալներն իրենց պաշտոնավարման ողջ ընթացքում զբաղվել էին գերազանցապես Կարսի նահանգի այլազգի բնակչության թալանով և այլ անօրինականություններով՝ այդ նպատակով օգտագործելով նաև զորամասերը [Կարսի մարզը, 2018, 346, 365]։

Նահանգում թալանի էին ենթարկվում ոչ միայն թուրքական կամ քրդական բնակավայրերը, այլև պետական և համաժողովրդական ունեցվածքը [Կարսի մարզը, 2018, 208, 285], մինչև իսկ պահեստներում գտնվող ռազմական գույքը, ինչը նույնպես մնում էր անպատժելի։

[1] Ըստ Խատիսյանի՝ երբ ինքն այդ մասին պատմում է ներքին գործերի նախարար Նոյ Ռամիշվիլուն, վերջինս այդ բոլորը հերքում է։ Բայց շուտով հայտնի է դառնում, որ Մ. Քեմալի հրամանով քննություն էր կատարվել այն մասին, թե Խատիսյանը որտեղից կարող էր այդ տեղեկությունը ստացած լինել [Խատիսյան, 2018, 346]։

Այդ մասին մինչև իսկ նահանգապետ Ս. Ղորղանյանի՝ Երևան ուղարկած տեղեկություններն ու բողոքները որևէ արդյունքի չէին հասնում, քանի որ Կարսի հիշյալ երկու «զորահրամանատարները» կառավարության մեջ իրենց ունեցած կապերով վայելում էին վերջինիս և, մասնավորապես, ռազմական նախարարի ամենաթողությունը, որի հանդեպ կարող էր անզոր լինել նույնիսկ բանակի գլխավոր հրամանատարությունը [Կարսի մարզը, 2018, 66-68, 326]:

Կարսում հայկական զորքի բարոյալքումը պայմանավորված չէր բոլշևիկների քարոզչությամբ, ինչպես ընդունված է մեզանում կարծել: Ինչպես վկայում է Ա. Բաբայանը, այնտեղ բոլշևիկյան քիչ թե նշանակալից քարոզչություն չկար: «Բոլշեւիկեան պրօպագանդը զօրքի մէջ գոյութիւն ունէր,– գրում է նա,– բայց մենք որ մօտիկից ծանօթացած ենք զօրքի ե՛ւ կազմի ե՛ւ տրամադրութեան հետ, չէինք տեսած այդ պրօպագանդի արդիւնքները: Մայիսեան շարժումներից յետոյ հայ ժողովրդի եւ բանակի մէջ բոլշեւիզմը վարկաբեկուած էր» [Բաբալեան, 1923, 60]:

Գ. Չալխուշյանը նույնպես ժխտում է հայկական զորքի բարոյալքումը բոլշևիկների քայքայիչ գործունեության հետ կապող պնդումները՝ դրանք համարելով պարզամտություն [Չալխուշեան, 1923, 24]: Հայկական զորքի բարոյալքումը պայմանավորված էր միմիայն այնտեղի ապիկար հրամանատարության գործելակերպով: Պատահական չէ, որ Դրոն Սուրմալուում փայլուն հաղթանակներ կերտեց, մինչդեռ Կարսի ճակատում խորապես բարոյալքված բանակը բացարձակ անճարակություն դրսևորեց: Երբ թուրքերը Սարիղամիշը գրավեցին, հայկական զորքերն առանց նրանց հետ շփման մեջ մտնելու նահանջեցին և դիրքեր զբաղեցրին միայն Կարսի մերձակայքում ու նրանից 20 կմ հեռավորության վրա գտնվող բարձունքներում [Սասունի, 1969, 193]: Մերդենեկն ու մյուս պարպված շրջանները նույնպես գրավելով՝ թուրքական զորքերը մոտ մեկ ամիս դադարեցրին առաջխաղացումը: Հարձակումը վերսկսելուց առաջ նրանք ուզում էին շոշափել Ռուսաստանի և Անտանտի տրամադրությունները, միաժամանակ նաև ճշտել իրենց պատկերացումը Հայաստանի դիմադրական կարողության վերաբերյալ: Անշուշտ, դրանով բավականաչափ ժամանակ էր ընձեռվում նաև հայկական կողմին՝ ստեղծված իրադրության վերագնահատման, ռազմաճակատը կարգի բերելու և դիմադրությունն ամրապնդելու համար, ինչը տեղի չունեցավ: Փոխարենն ապարդյուն աշխատանք էր կատարվում Անտանտի պետությունների օգնությունը հայցելու ուղղությամբ: Վարչապետի հանձնարարությամբ Անտանտի դաշնակիցներին ուղղված դիմումներին լավագույն դեպքում ցավակցական խոսքեր էին հետևում: Այդ ամենով հանդերձ՝ մինչև իսկ սեպտեմբերի վերջին, երբ թուրքերն արդեն գրավել էին Սարիղամիշն ու Մերդենեկը, Հայաստանի կառավարությունը կրկին մերժեց Ռուսաստանի միջնորդությունն ընդունելու՝ վերջինիս առաջարկը, որի դեպքում, ինչպես նշում էր Լեգրանը, Ռուսաստանը կկարողանար կանգնեցնել թուրքական հարձակումը [Զոհրաբյան, 1997, 185]: Վերոնշյալին հաջորդեցին, ինչպես հայտնի է, Կարսի հանձնումն ու, ի վերջո, նաև հայկական կողմի կապիտուլյացիան:

Հուլիսին Մոսկվայում ընդհատված բանակցությունները վերսկսվեցին միայն հոկտեմբերին՝ եզրափակվելով նույն ամսի 28-ին ստորագրված, Հայաստանի համար խիստ նպաստավոր մի պայմանագրով [Հայաստանը, 1972, 457-458], որը, սակայն, ստեղծված

իրադրության պայմաններում ժամանակավրեպ էր։ Հոկտեմբերի վերջին Ռուսաստանի կովկասյան քաղաքականությունը «կարգավորելու» համար հատուկ լիազորություններով Բաքու էր ուղարկվել Ստալինը [Խուրշուդյան, 2017, 238, որն արդեն նոյեմբերի սկզբից հավակնում էր թելադրել Ռուսաստանի կովկասյան քաղաքականությունը և նոյեմբերի 4-ին մերժեց վավերացնել վերոնշյալ պայմանագիրը։ «Դրությունը Թուրքիայում պարզ չէ,– գրում էր այդ առթիվ Ստալինը նոյեմբերի 5-ին Լենինին ուղարկած հեռագրում,– այն կարող է վտանգավոր դառնալ, եթե տեղի ունենա Քեմալի համաձայնությունն Անտանտի հետ, քանի որ Քեմալի չեզոքացումը կդյուրացնի Անտանտի արշավանքը դեպի Բաքու։ Հետևաբար առանց մանրակրկիտ հետախուզության և Թուրքիայում իրադրության պարզաբանման պետք չէ Հայաստանի հետ պայմանագիր կնքել, որը Հայաստանին, այսինքն՝ Անտանտին կհանձնի մուսուլման ազգաբնակչությամբ ստրատեգիական կարևորագույն մի շրջան, և որը մեզ կներքաշի կոնֆլիկտի մեջ Թուրքիայի հետ։ Անհրաժեշտ էր ձգձգել Հայաստանի հետ պայմանագրի կնքումը՝ ձևացնելով, որ Հայաստանի համար ձեռնտու հաշտություն ենք ցանկանում, իսկ հետո կերևա» [Հայաստանի Հանրապետութիւն, 1991]։

Դիվանագիտական նոր խոտորումներ։ Ստալինի՝ Կովկաս գալու և հայկական կողմի խայտառակ պարտությունների հետևանքով հայկական խնդրում Խորհրդային Ռուսաստանի մինչ այդ որդեգրած միասնական քաղաքականության մեջ ի հայտ եկան երեք կողմնորոշումներ։ Ս. Օրջոնիկիձեն դեմ էր Հայաստանի խորհրդայնացման հարցում հապաղելուն՝ խորհրդայնացման հետ կապելով նաև հայ ժողովրդի փրկությունը։ Ստալինը, նույնպես դեմ արտահայտվելով քեմալական հարձակմանը, այնուհանդերձ նկատի առնելով «գլոբալ» վտանգները, այն է՝ Անտանտի հետ առճակատման և Ռուսաստանի դեմ Անտանտի ու Թուրքիայի միացյալ ճակատի ստեղծման հավանականությունը, դեմ էր Հայաստան զորքեր մտցնելուն և ընդունում էր մինչև իսկ Հայաստանի կատարյալ ոչնչացման հնարավորությունը, իսկ երրորդ կողմնորոշումը, որը որդեգրել էր Լեգրանը, նախատեսում էր առանց Հայաստանի կառավարության համաձայնության չշտապել Հայաստանի խորհրդայնացման հարցում, այլ դիվանագիտական կոշտ ճնշման, հարկ եղած դեպքում նաև թուրքերի առջև կարմիր զորամասեր տեղակայելով՝ կանգնեցնել քեմալականներին։ Ինչ վերաբերում է Չիչերինին, ապա նա անհրաժեշտ էր համարում չհապաղել և գործել՝ աչքի առաջ ունենալով թե՛ Հայաստանի շտապ խորհրդայնացման և թե՛ միջնորդության հնարավորությունները։ Անկասկած, եթե Հայաստանի կառավարությունը, սթափ գնահատելով իրավիճակը, կամովին հրաժարվեր իշխանությունից, Ստալինը նույնպես այլևս չէր կարող որևէ առարկություն հանդես բերել։ Ընդունելով զինադադարի կնքման՝ թուրքական կողմի կապիտուլյացիոն պայմանները՝ Հայաստանի կառավարությունը շարունակում էր օգնության խնդրանքներով հեղեղել դաշնակիցներին, հատկապես Անգլիային, մինչդեռ բրիտանական արտգործնախարարության մատյաններում արդեն նույնիսկ ծաղրական գրանցումներ էին կատարվում հայերի «վախկոտության, անարժանության և հավակնոտության» մասին, որոնք «շարունակում էին աղաղակել» Արևմտյան Հայաստանի հանդեպ իրենց իրավունքների մասին՝ անկարող լինելով պահել նույնիսկ Արևելյան Հայաստանում գտնվող իրենց ներկայիս պետությունը [Հովհաննիսյան, 2016, 356]։ Նոյեմբերի 9-ին բրիտանական արտգործնախարարություն այցելած զոր. Բագրատունուն Դուայթ Օսբորնը հաղորդում էր, որ բրիտանական կառավարությունը «բարեգործական կազմակերպություն չէ, և որ իբրև ինքնավար պետություն Հայաստանի գոյության շարունակումը կախված է հայերի ունակություններից և չի

կարող հենվել օտար երկրների բանակների ու փողի վրա» [Հովհաննիսյան, 2016, 356-357]: Իսկ Կովկասում անգլիական Բարձր կոմիսարն, ըստ Խատիսյանի, հայերի կրած անընդմեջ պարտություններից հետո ասել էր, որ «Անգլիան խաղադրույք դրեց անհաջող ձիու վրա» [Խատիսյան, 2018, 201]:

Այդ ամենով հանդերձ՝ Հայաստանի կառավարությունը շարունակում էր համառորեն մերժել Ռուսաստանի օգնության առաջարկները: Միայն Կարսի անկումից հետո արտաքուստ համաձայնելով Ռուսաստանի միջնորդությանը [Խուրշուդյան, 2017, 273]՝ Օհանջանյանն ու իր կառավարությունը մտադիր չէին դրան ընթացք տալու: Դա լիովին հաստատվեց նոյեմբերի 16-ին Հայաստանի արտգործնախարարության քաղաքական բաժնի վարիչ Յակուլովի կողմից Բեկզադյանին ուղարկված հեռագրով [Կարինյան, 1934, 444-445]:

Նոյեմբերի 19-ին Հայաստանի կառավարությունը մերժեց թուրքերի հանդեպ հայերի բանակցական դիրքերը և ռուսական կողմի՝ իրենց միջնորդությունը ամրապնդելու համար Հայաստանում կարմիր զորամասեր տեղակայելու առաջարկն այն դեպքում, երբ վերջինս վստահեցնում էր, որ դա չի վտանգի Հայաստանի անկախությունը, իսկ Ռուսաստանի հովանավորությունն ընդունելու դեպքում խոստացել էր թուրքերին ետ քշել մինչև ռուս-թուրքական նախապատերազմյան սահմանը[1]: Այնուհետև հրավիրված կառավարության նիստում կրկին մերժվեց ռուսական կողմի՝ Հայաստանում կարմիր զորամասեր տեղակայելու՝ առաջարկը [Խատիսյան, 2018, 332-333]:

Բյուրո-կառավարության հրաժարականից հետո նոր վարչապետ Վրացյանը Լեգրանի հետ վարած բանակցություններում շարունակում էր հետևողականորեն մերժել թուրքերի դեմ հակակշիռ ստեղծելու համար Հայաստանում կարմիր զորամասերի տեղակայման առաջարկը: Հաստատելով Ալեքսանդրապոլ մեկնած պատվիրակության լիազորությունները՝ նոր վարչապետն այցելում էր օտարերկրյա ներկայացուցիչներին, այդ թվում՝ Լեգրանին: «Ամենքի համար պարզ էր այն օրերին,– գրում է Վրացյանը,– որ Հայաստանը կամ Ռուսաստանի հետ պետք է լիներ, կամ պետք է դառնար թուրքերի ձեռքին խաղալիք, եթե չբնաջնջվեր իսպառ» [Վրացյան, 1993, 529]:

Լեգրանի հետ նա հանդիպել է երկու անգամ: Առաջին կարճատև հանդիպման ժամանակ Վրացյանն առաջ էր քաշում անկախության աներկբայության գաղափարը: «Ես պարզաբանեցի,– գրում էր նա,– որ նոր կառավարությունն էլ նախորդի պէս, ամուր կանգնած է անկախութեան տեսակէտի վրայ, բայց իր քաղաքական ու ընկերային համակրանքներով հակուած է դէպի Սով. Ռուսաստանը» [Վրացեան, 2007, 180]:

Լեգրանը, ինչպես պարզ է դառնում նաև Վրացյանի տեղեկություններից, Հայաստանի խորհրդայնացման պահանջը չէր դնում և մտահոգված էր այն հարցով, թե երբ պետք է Հայաստանի կառավարությունը համաձայնի՝ կարմիր զորամասեր մտցնելու Հայաստան: Չնայած, ըստ Վրացյանի, Լեգրանը «հասկացնում էր», որ օգնություն ստանալու համար Հայաստանի կառավարությունը պետք է իր «սեփական ձեռքերով» Հայաստանը դարձներ խորհրդային [Վրացեան, 2007, 180)] սակայն նա չէր պարզաբանում, և ընթերցողի համար մութ է մնում, թե ինչպե՞ս էր Լեգրանը դա «հասկացնում»:

[1] Բանակցությունների արձանագրության ամբողջական տեսքը տե՛ս «Բանբեր», 1967, 85-91:

Երկրորդ հանդիպման ժամանակ Վրացյանը հարցնում է «հստակ ու վճռական կերպով», թե Ռուսաստանը կարող է օգնել Հայաստանին, և եթե այո՝ ինչպես։ Հստակ էր նաև Լեգրանի պատասխանը։ Նա առաջարկում է հետ կանչել Խատիսյանի պատվիրակությանը Ալեքսադրապոլից, մերժել թուրքերի պահանջները և խորհրդային զորքեր մտցնել Հայաստան։ Երբ Վրացյանը հարցնում է, թե ինչ երաշխիք կա, որ մինչև խորհրդային զորքերի տեղ հասնելը թուրքերը չեն շարժվի Երևանի վրա և նոր կոտորածներ չեն իրականացնի, Լեգրանը պատասխանում է, որ թուրքերն այդպիսի քայլ չեն անի [Վրացյան, 1993, 529]։

Վրացյանը, սակայն, մերժում է Լեգրանի առաջարկը, ինչպես ինքն է նշում՝ ելնելով այն կշռադատումներից, որ մինչև ռուսները կարողանան «շոշափելի ուժ» հասցնել Երևան, առնվազն մեկ շաբաթ կպահանջվեր, մինչդեռ թուրքական զորքերը կանգնած էին Արաքսի ափին՝ «հազիվ 20-25 մղոնի վրա Հայաստանի մայրաքաղաքից», և որ եթե կառավարությունը խզեր բանակցությունները, դա պիտի հանգեցներ պատերազմի վերսկսման, և թուրքերը կարող էին գրավել նաև Հայաստանի մնացած մասը։

Նման պատճառաբանությունը, անկասկած, չէր կարող դիմանալ որևէ քննադատության։ Ի՞նչն էր խանգարում Վրացյանին անգամ այն դեպքում, եթե հայկական բանակը չէր կարող կարճատև դիմադրություն ցուցաբերել թուրքերին, զանազան պատրվակներով, ընդհուպ իր և իր կառավարության հրաժարականի միջոցով ձգձգել բանակցությունները։ Նաև անհասկանալի է մնում, թե ինչու է այդ հանդիպման ժամանակ Վրացյանը առարկություններ կատարել Հայաստանի խորհրդայնացման դեմ, երբ Լեգրանը, ինչպես նաև իր՝ Վրացյանի տեղեկություններից է պարզ դառնում, նման պահանջ չէր դնում։ Քանի որնրանց հանդիպումների վերաբերյալ այլ սկզբնաղբյուրներ չկան, ստիպված ենք առաջնորդվել միայն Վրացյանի տեղեկություններով։ Ըստ այդմ՝ նա «խորհրդային զորքեր մտցնելու և Հայաստանը խորհրդայնացնելու դեմ» բերում է նաև այլ առարկություններ, մասնավորապես նշում է, որ խորհրդայնացման դեպքում Հայաստանը բոլորովին պիտի կտրվեր Եվրոպայից ու Ամերիկայից և պիտի զրկվեր այն պարենից, որ ստանում էր այնտեղից։ Դա, ըստ Վրացյանի, հայ ժողովրդին կհասցներ սովամահության, քանի որ Ռուսաստանն ինքն էլ, «սովահար» վիճակում լինելով, ի վիճակի չէր Հայաստանին պարեն տրամադրելու։ Բացի դրանից՝ հայտնում էր Վրացյանը Լեգրանին, Հայաստանի խորհրդայնացումը «մահացու հարված պիտի հասցներ Հայկական հարցին և Հայաստանին տրված բոլոր միջազգային հանձնառություններին ու դաշնագրերին, մինչդեռ, եթե Հայաստանը պահվեր անկախ, թե՛ դրսի աշխարհից չէր կտրվի, թե՛ կմնար հայկական հարցի իրավատեր» [Վրացյան, 1993, 530]։

Մերժելով Հայաստան կարմիր զորքեր մտցնելու առաջարկը՝Վրացյանը Լեգրանին առաջարկում էր դիվանագիտական ճնշում գործադրել թուրքերի վրա։ Եթե, ասում էր Վրացյանը, խորհրդային իշխանությունը վստահ էր, որ թուրքերը խորհրդային իշխանությանը հակառակ քայլեր չէին կատարի, ուրեմն վերջինիս «խոսքն էլ բավական պիտի լիներ, որպեսզի թուրքերը ծայրահեղ պահանջներ չդնեին Հայաստանի առաջ։ Իսկ եթե խորհրդային կառավարությունը կարծում էր, թե թուրքերը իրենց խոսքին ականջ չէին դնի, նշանակում էր՝ մի քանի հարյուր ռուս զինվորների մուտքն էլ Հայաստանի սահմաններից ներս արգելք չէր լինի թուրքերին վերջնականապես մաքրելու իրենց հաշիվը հայերի հետ» [Վրացյան, 1993, 530]։

Լեգրանը պատասխանում է, որ հաջողության հասնելու համար «թուրքերին պետք էր դնել կատարված փաստի առջև և մինչև Ալեքսանդրապոլ գրավել ռուսական զորքերով» [Վրացյան, 1993, 531]: Ինչ վերաբերում է Վրացյանի վերոնշյալ մյուս առարկություններին, նա նշում է, որ հայերը պետք է հրաժարվեն Եվրոպայից ու Ամերիկայից, ինչպես և Սևրի պայմանագրից և ծիծաղելի է համարում խոսել «ինչ-որ ալյուրի մասին, որ ամերիկյան բանկիրներն ու պատվելիները, իբրև ողորմություն, շպրտում են հայերի առջև»՝ ավելացնելով, որ Ռուսաստանի համար որևէ դժվարություն չի ներկայացնում «Կուբանից մի քանի միլիոն փութ ալյուր հասցնելը Հայաստան» [Վրացյան, 1993, 531]: Վրացյանը, այսպիսով, ինչպես և Օհանջանյանը, մերժում էր կարմիր զորքեր Հայաստան մտցնելու գաղափարը՝ Ռուսաստանին վերապահելով միայն դիվանագիտական միջամտության հնարավորություն: Բայց արդյո՞ք հայկական կողմը գեթ այդ հարցում իրապես շահագրգռված էր: Ինչպես նշվեց, նոյեմբերի 16-ի դրությամբ Հայաստանի կառավարությունը մերժում էր բանակցություններում Ռուսաստանի միջնորդությունը: Այդ օրերին Ալեքսանդրապոլ մեկնած նախարար Արարատյանը Հայաստանի այդ դիրքորոշման մասին տեղյակ պահեց մինչև իսկ Ք. Կարաբեքիրին՝ այդպիսով վերջինս տալով լրացուցիչ հիմք՝ մերժելու Ռուսաստանի միջնորդությունը, իսկ նոր վարչապետ Վրացյանը որևէ ջանք չգործադրեց Հայաստանի մոտեցումը սրբագրելու և Ռուսաստանի մասնակցության հարցում թուրքերի մերժողական կեցվածքը փոխելու համար: «Յերևանի Հանրապետության դիմումի վրա,– գրում էր Ք. Կարաբեքիրը նոյեմբերի 26-ին Հայաստանի պատվիրակության նախագահ Խատիսյանին հանձնված իր՝ թիվ 23 պաշտոնական գրության մեջ,– Ռուսական Սովետական կառավարության Արտաքին գործերի Կոմիսարի կողմից միջնորդության առաջարկ է յեղած մեր Կառավարության, արյունահեղության վերջ տալու նպատակով: Մինչդեռ զինադադարը կնքված և սկզբունքային պայմաններն ընդունված և յերկու կողմից պատվիրակները, Ալեքսանդրապոլում հավաքվելու վորոշում տրված լինելով, Սովետական պատվիրակության ներկայությանը պետք չի մնացել, և զինադադարի համար Ալեքսադրապոլ յեկած Ձեր Ներքին Գործոց նախարար ԱՐԱՐԱՏՅԱՆԸ հայտնած է, վոր Հայաստանի Կառավարությունը ևս չի ցանկանում հիշյալի գտնվիլն և վոր Հանձնաժողովը մեր Կառավարության դիմելով այս մասին պատասխան ստացած է, վոր նույն միտքն ունի և մեր Կառավարությունը» [Կարինյան, 1934, 445]: Եթե և՛ հայերը, և՛ թուրքերը դեմ էին Ռուսաստանի միջնորդությանը, ապա ի՞նչ կարող էր անել վերջինս անկոչ հյուրի կարգավիճակում: Անշուշտ, Ալեքսանդրապոլի բանակցություններին մասնակցելու համար այնտեղ ուղարկված Բ. Մդիվանին այն անձը չէր, որ կարող էր շահագրգռված լինել բանակցությունների ժամանակ Հայաստանին օգնելու հարցում: Նրա՝ որպես Ռուսաստանի ներկայացուցչի թեկնածությունը պնդում էր Ստալինը, որին Չիչերինը դեմ էր, սակայն վերջինս ի վերջո տեղի տվեց Ստալինի պնդումներին [Հայաստանի Հանարպետությունը 1918-1920 թթ., 2000, 332]: Մդիվանին Ալեքսադրապոլում, բնականաբար, կատարում էր Ստալինի ցուցումները՝ սերտ հարաբերություն հաստատելով Կարաբեքիրի հետ և իրականում հետապնդելով միայն Հայաստանի խորհրդայնացման գաղափարը: Ըստ Խատիսյանի՝ Մդիվանին պատճառաբանում էր, թե չի կարող մասնակցել բանակցություններին, քանի որ թուրքերը դա արգելում էին, և ավելի խանգարում, քան օգնում էր հայկական պատվիրակությանը՝ Ալեքսանդրապոլում

կազմակերպելով հանրահավաքներ և քարոզելով բոլշևիկյան գաղափարներ [Խատիսյան, 2018, 339]:

Այնուհանդերձ, չենք կարող չարձանագրել, որ հայկական կողմի գործելակերպը նույնպես էապես նպաստեց բանակցություններից Ռուսաստանի մեկուսացմանը: Իսկ դա նշանակում էր, որ Հայաստանի կառավարությունը Վրացյանի կողմից մատնանշված վերոնշյալ ընտրության պարագայում ընթանում էր թուրքերի ձեռքին «խաղալիք» դառնալու ճանապարհով: Դա փաստում է նաև նոյեմբերի 23-ին Թիֆլիսում գտնվող Ա. Թոփչյանի և Ս. Վրացյանի միջև կայացած հեռախոսազրույցը: «Գերադասում ենք մաքսիմալ զիջումներով համաձայնվել տաճիկների հետ, առանց երրորդ ուժի մասնակցության»,– հայտնում էր Վրացյանը Թոփչյանին՝ ավելացնելով, որ կառավարությունը մերժել է ռուսական զորք մտցնելը, որ իրենք միայն «ծայրահեղ դեպքում» կընդունեն դա, և որ կառավարությունը «Սովետիզացիան այս պայմանների մեջ» համարում է վտանգավոր, և Հայաստանի կառավարությունն առայժմ ընդունում է միայն ռուսական կողմի դիվանագիտական միջամտությունը: Վրացյանի՝ Հայաստանում ռուսական զորամասերի տեղակայումը մերժելու սույն դիրքորոշումը չէր տարբերվում նախորդ կառավարության դիրքորոշումից, չնայած, ինչպես նա ևս վկայում է վերոնշյալ հեռախոսազրույցի ժամանակ, ռուսական կողմը երաշխավորում էր Հայաստանի շահերն այդ դեպքում զենքի ուժով պաշտպանելու և միաժամանակ Հայաստանի խորհրդայնացումից զերծ մնալու իր պատրաստակամությունը: «Մեծամասնականների կարծիքն այն է, որ իրենց զորքերի ներկայությունը Հայաստանում կստիպե տաճիկներին կրճատել իրենց պահանջները,– հայտնում էր Վրացյանը Թոփչյանին,– հակառակ դեպքում պատրաստ են կռվել՝ առանց որևէ կոմպենսացիայի» [«Բանբեր», 1967, 67-68]: Այս ամենը նկատի առնելիս դժվար է չհամաձայնել Լեգրանի այն տեսակետին, որ Հայաստանի կառավարությունն իրականում մտահոգված էր առավելագույն զիջումների գնով «իր իշխանությունը փրկելու» հարցով: «Անգորայի կառավարության՝ Կարաբեքիրի միջոցով մեզ հաղորդած պատասխան նոտայում,– գրում էր Լեգրանը նոյեմբերի 20-ին Չիչերինին, Օրջոնիկիձեին և Ստալինին ուղղված իր հեռագրում,– որն այսօր երեկոյան ռադիոյով տրվել է Բաքու՝ Օրջոնիկիձեին, Չիչերինին հաղորդելու համար, նկատվում է թուրքերի խուսափողական վերաբերմունքը մեր միջնորդության նկատմամբ, դաշնակների վարքագծից նմանապես երևում է, որ նրանք վախենում են մեջ միջամտությունից և ձգտում են առավելագույն զիջումների ճանապարհով թուրքերի հետ հասնել ինքնուրույն համաձայնության՝ իրենց իշխանությունը փրկելու համար» [Խուրշուդյան, 2017, 299]:

Իսկ այն, թե քեմալական Թուրքիան Ալեքսանդրապոլում պայմանագրի կնքմամբ ինչ հեռահար նպատակներ էր հետապնդում, հստակ ձևակերպված է վերջինիս արտգործնախարար Ահմեդ Մուխտարի՝ նոյեմբերի 8-ին Կարաբեքիրին ուղարկված նամակում: «Մենք հաշտության սովորական պայմանագիր չպետք է կնքենք ու մեր զորքերը դուրս բերենք Հայաստանից,– գրում էր նա: –Հայերին խեղդամահ անելով, միաժամանակ, մենք պետք է ջանանք չսրել հարաբերությունները Եվրոպայի հետ, որի դաշնակիցն է Հայաստանը, և այդպիսով պետք է հասնենք մեր նպատակներին: Այժմ մենք պետք է նկրտենք վերջնականապես ոչնչացնել հայկական բանակը, զենքերը հայերից բռնախլել և բաժանել մուսուլմաններին, հայերին զրկել նոր բանակ ստեղծելու իրավունքից, տիրել երկաթուղիներին և անմիջական կապ հաստատել

ադրբեջանական թուրքերի ու նրանց կառավարության հետ: Ահա այն հիմնական կետերը, որոնք պետք է դրվեն հաշտության պայմանագրի հիմքում» [«Հայաստանի աշխատավորուհի», 1991, 2]:

Ալեքսանդրապոլյան բանակցությունների և Հայաստանի խորհրդայնացման շուրջ: Ա. Մուխտարի կողմից մատնանշված կետերն էլ պետք է դառնային Ալեքսանդրապոլում ստորագրված պայմանագրի հիմքը: Այնտեղ տեղի ունեցած բանակցությունների վերաբերյալ Խատիսյանի տեղեկությունները, ի դեպ, որոշ ուշագրավ բացահայտումներ են անում: Նոյեմբերի 24-ին Ք. Կարաբեքիրի հետ իր պատվիրակության ունեցած առաջին հանդիպման ժամանակ վերջինս նշում էր, որ հայ-թուրքական բանակցությունները կարող էին շատ ավելի շուտ սկսվել, «եթե միայն Հայաստանի կառավարությունը ընդառաջ գնացած լիներ այն առաջարկներին, որոնք եղել էին Անկարայի կառավարության կողմից, և դրանով վերջին պատերազմի բոլոր սարսափների առաջը կառնվեր» [Խատիսյան, 2018, 337]:

Կարաբեքիրը, անկասկած, նկատի ուներ ՀՀ կառավարության հետ ամռանն ուղիղ բանակցությունների միջոցով համաձայնության հասնելու թուրքական կողմի վերոհիշյալ փորձերը, որոնք հայկական կողմը մերժել էր: Կարաբեքիրը Խատիսյանին նաև հայտնել էր, որ սկզբնապես ինքը չէր մտածում գրավել Կարսը, այլ նպատակ ուներ վերցնելու Օլթին, բայց տեսնելով, թե ինչ դյուրությամբ էին հայերը հողերը զիջում իր ճնշման տակ, նա ավելի և ավելի առաջացավ: Կարաբեքիրը չէր զլանում մատնանշելու նաև հայ զինվորների թերի պատրաստվածությունը, որոնք «չէին օգտվում բնական պաշտպանության հարմարություններից, խմբերով կանգնում էին բարձրությունների վրա և այդպիսով մատնում իրենց զորամասերի դիրքերը» [Խատիսյան, 2018, 337-338]:

Միաժամանակ Կարաբեքիրը հայտնում էր բանակցությունները միայն հայկական կողմի հետ, առանց ռուսական ներկայացուցչի մասնակցության վարելու իր ցանկությունը, որի դեմ, ըստ Խատիսյանի, ինքն առարկել է, բայց որևէ հաջողության չի հասել: Ինքնին հասկանալի է, որ Խատիսյանն առարկության դեպքում չէր կարող հաջողություն ունենալ, քանի որ, ինչպես նշվեց, ՀՀ կառավարությունը մինչ այդ նույնպես ռուսական մասնակցությունը խափանելու դիրքորոշում էր որդեգրել, ավելին՝ Արարատյանի միջոցով այդ հարցում հայտնել էր իր համերաշխությունը թուրքական կողմին: Մդիվանին նույն օրը Չիչերինին և Օրջոնիկիձեին հեռագրել է, որ, ըստ Կարաբեքիրի, վերջինս Անկարայից հրահանգ է ստացել բանակցություններ վարելու միայն հայերի հետ, և որ «Անկարայի կառավարությունը մեր միջնորդությունը համարում էր ավելորդ՝ նկատի ունենալով, որ հայերն արդեն ընդունել են թուրքերի բոլոր պայմանները» [Ալիխանյան, 1966, 173]:

Նախքան առաջին նիստը, որ պետք է տեղի ունենար նոյեմբերի 25-ին, հայկական պատվիրակությունը ձևակերպեց այն պայմանները, որոնք պետք է ներկայացնեին թուրքերին: «Հայաստանի կառավարության կողմից մեզ տրված հրահանգների համաձայն,– գրում է Խատիսյանը,– մենք վճռել էինք պաշտպանել Հայաստանի սահմանները՝ մտցնելով նրա մեջ ամբողջ Ռուսական Հայաստանը, Վանը, Մուշը, ամբողջ Վանա լիճը, Ռիզե նավահանգիստը՝ Էրզրումը և Տրապիզոնը թողնելով թուրքերին: Էրզրումը և Տրապիզոնը թուրքերին թողնելը մենք մեր կողմից համարում էինք իբրև զիջում» [Խատիսյան, 2018, 340]:

Հայկական պատվիրակության այդ պահանջները ակնհայտորեն բխում էին հենց թուրքական կողմի՝ դեռ ամռանը արված վերոնշյալ առաջարկներից. այն ժամանակ, երբ Հայաստանը դեռ կարող էր թուրքերին լուրջ հակառակորդի հայտ ներկայացնել, և երբ թուրքերին այդօրինակ պահանջներ էր ներկայացրել նաև Չիչերինը: Տխուր զավեշտ էր այն, որ հայկական կողմը, նախկինում մերժելով այդ առաջարկները և Ռուսաստանի միջնորդությունը՝ ներկայումս լիակատար կապիտուլյացիայի պայմաններում հանդես էր գալիս այդ առաջարկներից բխող պահանջներով: Իսկ երբ սահմանների վերաբերյալ հայկական կողմի այդ պայմանները ներկայացվեցին թուրքական պատվիրակությունը, Կարաբեքիրն «ապշած» էր. «Ձեր սահմանները մեզ ուղղակի ապշեցրին,– ասում է նա:]Եվ դուք՝ նստած Ալեքսանդրապոլում, պարտություն կրելուց հետո, պահանջում եք Մուշն ու Վանը: Ի՞նչ կլիներ, եթե դուք նստած լինեիք Վանում: Ի՞նչ կմնար Թուրքիայից: Հավատացեք, որ ձեր պայմանները մենք պետք է թաքցնեինք մեր սպաներից և զինվորներից, ապա թե ոչ, նրանք ցրիվ պիտի տային ձեր պատվիրակությունը: Իմ սպայակույտի սպաները պահեցին գաղտնիքը: Քննության առնել ձեր այս պայմանները անկարելի է: Մտածեցեք» [Խատիսյան, 2018, 346]: Նոյեմբերի 30-ին թուրքերը ներկայացրին իրենց պայմանները, որոնց համաձայն՝ Կարսի նահանգն ու Սուրմալուի գավառը, որը երբեք Թուրքիայի կազմում չէր եղել, տրվում էին Թուրքիային: Զանգեզուրն ու Նախիջևանը հանձնվելու էին Ադրբեջանի վերահսկողությանը: Հայաստանին իրավունք էր տրվում ունենալու ոչ ավելի, քանի 1200 զինվոր, 20 գնդացիր և 8 թնդանոթ [Խատիսյան, 2018, 347]: Հայաստանը, այդպիսով, փաստորեն, նաև լիովին զինաթափվելու էր՝ չունենալով բանակ և զենք ու զինամթերք ունենալու իրավունք [Խատիսյան, 2018, 348]: Նույն օրերին թուրքական իշխանություններն Ալեքսանդրապոլում ձեռնամուխ էին եղել համընդհանուր թալանի և դրա հետ մեկտեղ իրենց իսկ օգնությամբ հռչակված՝ կեղծ հեղկոմի միջոցով, բանվորական ուժ ձեռք բերելու պատրվակով հավաքագրում էին հազարավոր հայ երիտասարդների՝ նրանց բռնի ուղարկելով Թուրքիա[1]: Ալեքսանդրապոլի պայմանագիրը, անկասկած, ոչնչով չէր կարող խոչընդոտել Թուրքիային՝ լիովին «խեղդամահ» անելու Հայաստանն ու հայ ժողովրդին, և ստեղծված իրավիճակում փրկությունը կարող էր լինել միայն խորհրդայնացումը: Դա, սակայն, եթե հաղթեր Ստալինի քաղաքականությունը, նույնպես կարող էր տեղի չունենալ և եթե կատարվեց, ապա Ս. Օրջոնիկիձեի ինքնուրույն և համաձակ գործելակերպի շնորհիվ: Դեռ նոյեմբերի 23-ին Օրջոնիկիձեն Վլադիկավկազում գտնվող Ստալինի հետ ուղիղ գծով հեռախոսազրույցի ժամանակ նրա համաձայնությունը և միջնորդությունն էր խնդրում՝ Հայաստան զորք մտցնելու նպատակով ՌԿ(բ)Կ կենտկոմի թույլտվությունը ստանալու համար: «{…} Մեր կարծիքն է՝ այլևս չսպասել,- հայտնում էր նա Ստալինին, և հենց հիմա սեպաձև խրվել…» (Խուրշուդյան, 2017, 302): Դրա անհրաժեշտությունը հիմնավորելու համար Օրջոնիկիձեն առաջ էր քաշում Թուրքիայի և Վրաստանի համաձայնության կայացման և Թուրքիայի կողմից Ադրբեջանի վրա հարձակվելու վտանգը, ինչը թերևս Ստալինին համոզելու նպատակ էր հետապնդում: Ստալինը դեռ վաղաժամ էր համարում Հայաստան զորք մտցնելը և, հնարավոր համարելով Թուրքիայի և Վրաստանի դաշինքն ու Ադրբեջանի վրա

[1] Հետագայում, ինչպես նշում է Խատիսյանը, Թուրքիա ուղարկված այդ երիտասարդներից միայն 230-ը վերադարձավ, իսկ մյուսները զոհ էին դարձել ցրտին, քաղցին կամ ուղղակի սպանվել էին, տե՛ս Խատիսյան, 2018, 341:

նրանց համատեղ հարձակման հնարավորությունը, առաջարկում է առաջին հերթին հարվածել Վրաստանին, նրան խորհրդայնացնել և հետո միայն սեպաձև մտնել Հայաստան: Ստալինն առերևույթ տեղի է տալիս Օրջոնիկիձեի պնդումներին, խոստանում կենտրոնի հետ խոսել ու պաշտպանել նրա առաջարկը: «Նկատի ունեցիր,- հաղորդում է նա Օրջոնիկիձեին,- որ մեր տրամադրության տակ չկա ոչ մի ռազմական և երկաթուղային ճանապարհ, բացի Աղստաֆա-Դիլիջան խճուղուց, որի պատճառով մեր զորքերը կարոց են հայտնվել անբարենպաստ պայմաններում ինչպես ռազմավարական տեսակետից, այնպես էլ մատակարարման իմաստով» (Խուրշուդյան, 2017, 303):

Օրջոնիկիձեն, սակայն, շարունակում էր պնդել իր տեսակետը՝ նշելով, որ Ստալինի ներկայացրած դժվարությունները հետագայում կարող էին ավելի վատթարանալ, եթե Դիլիջանը գրավվեր թուրքերի կողմից, իսկ Ղարաքիլիսան արդեն գրավվում էր: «Հայկական բանակ այլևս գոյություն չունի,– ասում էր նա:– Բնակչության տրամադրությունները, կարծում եմ, չեմ սխալվի, եթե ասեմ, որ ավելի շատ մեր կողմն է, քան որևէ ուրիշ մեկի կողմը: Ղազախի շրջանի սահմանում հայ զինվորները, սպաները և բնակչությունը դիմում են մեզ՝ ցույց տալ, թե ինչ անեն իրենք: Մեր կողմից հետագա սպասողականությունը հայ ժողովրդի մեջ կստեղծի այն տպավորությունը, որ մենք էլ ենք լքել նրան, թողնելով բախտի քմահաճույքին: {…} Երաշխավորում եմ, որ բոլոր ուղղությունների գործողություններն էլ կավարտվեն հաջողությամբ, թեև այս շատ համարձակ է…» (Խուրշուդյան, 2017, 303-304):

Ստալինը, նույն օրն Օրջոնիկիձեի տեսակետը հայտնելով Լենինին և սկզբունքորեն իր համաձայնությունը հաղորդելով, այնուհանդերձ ճիշտ էր համարում Հայաստանի նկատմամբ գործողությունները հետաձգել մինչև նոր օգնական զորամասերի ժամանումը [Խուրշուդյան, 2017, 304-305]: Նոյեմբերի 24-ին Օրջոնիկիձեն նույնպես հեռագրեց Կենտկոմին՝ գրելով. «Հայ ընկերների կարծիքով, այլևս կարիք չկա սպասել: Թուրքերը, ըստ երևույթին, ձգտում էին հաշվեհարդար տեսնել հայերի հետ և ցանկանում էին ունենալ անկաշկանդ ձեռքեր: Դաշնակցականները, անկասկած, կորցրել են ամեն մի ազդեցություն, դա երևում էր Լեգրանի հաղորդումներից: Մեր անվերջ սպասողական դրությունը հայ մասսաներին վերջնականորեն կհասցներ բոլորի կողմից լքվածի դրության, իսկ այժմ նույնիսկ «Մշակն» է սպասում մեր գալստյանը… Առավոտյան ուղարկում են ընկերներին» [Ալիխանյան, 1966, 178]: Օրջոնիկիձեն, առանց կենտրոնից համաձայնություն և հրահանգներ ստանալու, նոյեմբերի 25-ին հատուկ գնացքով Բաքվից Ղազախ ուղարկեց ՀԿԿ կենտկոմի արտասահմանյան բյուրոյի և Հայհեղկոմի անդամներին հացի, շաքարի, դեղորայքի, նավթի, կտորեղենի և այլ մթերքներով լի բեռնատար վագոնների հետ միասին [Ալիխանյան, 1966, 178-179]: ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն, սակայն, գերադասում էր ընդունել Ստալինի սպասողական մոտեցումը, և նոյեմբերի 27-ին Օրջոնիկիձեին ցուցում տրվեց Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու նպատակով այնտեղ զորամասեր չմտցնել, դաշնակցականների հետ զինված ընդհարումների ոչ մի առիթ ստեղծել և առհասարակ չդիմել այնպիսի գործողությունների, որոնք Անտանտը կարող էր օգտագործել՝ ռազմական գործողություններ սկսելու համար: Չնայած քաղբյուրոյի՝ Հայաստան զորք չմտցնելու որոշմանը՝ Օրջոնիկիձեն վճռեց չհապաղել: Նրա հրահանգով նոյեմբերի լույս 29-ին գիշերը Հայհեղկոմը

կարմիրբանակային զորամասերի հետ անցավ սահմանը՝ մտնելով Իջևան։ Եվ Օրջոնիկիձեն նույն օրը Կենտկոմին հայտնեց արդեն կատարված փաստի մասին՝ նշելով, որ դա տեղի է ունեցել Իջևանի ու Դիլիջանի շրջանների բնակչության խնդրանքի հիման վրա [Ալիխանյան, 1966, 186-187]։ Այն, որ Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցավ կամ առնվազն չհետաձգվեց իր աղետալի բոլոր հետևանքներով, պայմանավորված էր, փաստորեն, Օրջոնիկիձի համարձակ գործելակերպով։ Չէ՞ որ գործողության ձախողման դեպքում նա էր պատասխանատվություն կրելու՝ Կենտկոմի քաղբյուրոյի հրահանգին չենթարկվելու համար։

Այսպիսով՝ Ռուսաստանի՝ կրկին տարածաշրջան մուտք գործելուց հետո Հայաստանն ուներ հնարավորություններ՝ ոչ միայն տարածքային կորուստներ չկրելու, այլև իր սահմաններն ընդլայնելու, ավելին՝ այդ սահմաններում իր անկախությունը պահպանելու համար։ Այն, ինչը խանգարեց այդ հնարավորություններն օգտագործելուն, ՀՀ կառավարության անփոփոխ արևմտյան և հակախորհրդային կողմնորոշումն էր։ Նույնիսկ, եթե թուրքերի կողմից Սարիղամիշը գրավելուց հետո Հայաստանն ընդուներ Ռուսաստանի միջնորդությունը, հետագա բոլոր աղետները կարող էին կանխվել։ Իսկ թե ինչպիսի առավելություններ կունենար Հայաստանը թուրքերի ներխուժումից հետո հնարավորինս վաղ խորհրդայնանալու դեպքում, մեկնաբանության կարիք թերևս չունի։ ՀՀ կառավարության կողմից բոլշևիկներին իշխանության զիջումն ու Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցան մեզ համար ամենաօրհասական պահին, երբ թուրքական հարձակվող բանակն արդեն հասել էր Ալեքսանդրապոլ, և Թուրքիայի հետ սահմանն էլ գծվեց դրան գրեթե համապատասխան։ Ըստ Հայաստանի հանրապետության վերջին վարիչների՝ նրանք ջանում էին փրկել անկախությունը, մինչդեռ իրականում նրանք, շարունակելով հետևել, այսպես կոչված, արևմտյան դաշնակիցներին ապավինելու «օրիենտացիային», տանուլ տվեցին ոչ միայն անկախությունը, այլև տարածքները։

Արդյունքում այլ բան չէր մնում, քան կրկին բողոքել այն մասին, որ «դաշնակիցները» խաբեցին մեզ։ Եվ իհարկե, որևէ ուշացած ինքախոստովանություն այլևս ոչինչ չէր կարող փոխել։ «Խորհրդարանը երկիրը կամովին է հանձնել բոլշևիկներին,– հետագայում՝ 82 տարեկան հասակում պետք է ասեր Ս. Վրացյանը։ –Մենք պետք է ավելի խոհեմ լինեինք, ավելի շրջահայաց պետք է այդ քայլը ըրած ըլլայինք մայիսյան ընդվզումների օրերին, Հայաստանը հանձնած ըլլայինք բոլշևիկներուն։ Հայաստանի տարածքը ավելի ընդարձակ կըլլար՝ Ղարս, Արդահան, Իգդիր… էհ, ինչ ըսիմ, ինչպես արդարանամ» [Կարապետյան, 2007, 113]։

Եզրակացություն: 1920 թ. Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի հարաբերություններում, չնայած Ռուսաստանից Թուրքիային տրվող ռազմական և նյութական աջակցությանը, իրականում մշտապես առկա էր որոշակի առճակատում, և խորհրդային կառավարությունը, հակառակ մեզանում տարածված թյուր կարծիքի, մտադիր չէր Հայաստանի Հանրապետությունը կամ նրա տարածքի մի մասը զիջել թուրքերին։ Տարածաշրջանում ձևավորված իրադրության իրատեսական գնահատման և Խորհրդային Ռուսաստանի հետ համագործակցության՝ ռուսական կողմի նախաձեռնություններին ընդառաջելու դեպքում Հայաստանը կարող էր ոչ միայն կանխել թուրքական ներխուժումը և այն ռազմաքաղաքական ճգնաժամը, որում հայտնվեց դրա հետևանքով, այլև իրադարձությունների զարգացումը որոշակիորեն փոխել իր օգտին։ ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարները, անվերապահորեն ապավինելով արևմտյան դաշնակիցներին, այդ հարցում լիովին անկարող գտնվեցին։ Իսկ

«ռուսական մուրճի և թուրքական սալի» միջև հայտնվելու և ճզմվելու, Վրացյանից սերած և մեզանում արմատավորված տեսակետը պարզապես առասպել է, պատմական իրողությունների սխալ գնահատման հետևանք, որը ստեղծվել է՝ արդարացնելու Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարության ձախողումներն ու ապիկարությունը և միաժամանակ տասնամյակներ շարունակ հանիրավի սնունդ է տվել հակառուսական տրամադրությունների: Առավել ցավալին և վտանգավորն այն է, որ մենք ներկայումս էլ շարունակում ենք այդ առասպելը հրամցնել սերունդներին, այդպիսով թույլ չտալով նրանց՝ քաղելու և յուրացնելու այն դասերը, որոնք ավանդում է մեզ այդ պատմաշրջանը, և որոնք չսերտելու դեպքում պատմությունն այլևս կարող է չներել մեզ, քանի որ այսօր՝ ավելի քան մեկ դար անց, մեր տարածաշրջանում նույն աշխարհաքաղաքական շահերն են բախվում, մենք շրջապատված ենք նույն հարևաններով, նույն մարտահրավերներն են, ինչ 103 տարի առաջ և տեսանելի ապագայում էլ դրանք չեն փոխվելու:

Գրականության ցանկ

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 203:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 604, թ. 13, 18:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 604, թ. 16, 19:
Ալիխանյան Ս. 1966, Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921 թթ.), Երևան, 413 էջ:
Արզումանյան Մ. Վ. 1973, Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, 581 էջ:
Բաբալեան Ա. 1923, Կարսի անկումը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիվ 12, էջ 60:
«Բանբեր Հայաստանի արխիվների» (1967), թիվ 3, էջ 67-68, 85-91:
Գալոյան Գ. 1999, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 539 էջ:
Զոհրաբյան Է. 1979, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 344 էջ:
Զոհրաբյան Է. 1997, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 363 էջ:
Լազեան Գ. 1991, Հայաստան եւ հայ դատը հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 435 էջ:
Խատիսյան Ա. 2018, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Երևան, 479 էջ:
Խուրշուդյան Լ. 2017, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 350 էջ:
Կարապետյան Մ., Գևորգյան Է. 2017, Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին, ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 441 էջ:
Կարինյան Ա. 1926, Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 88 էջ:
Կարինյան Ա. 1934, Յերկերի ժողովածու, հատոր առաջին, Երևան, 452 էջ:
Կարսի մարզը Հայաստանի հանրապետության կազմում (1919 ապրիլ-1920 հոկտեմբեր) 2018, Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանի յուշերը, աշխատասիրությամբ՝ Վլադիմիր Հարությունյանի, Երևան, 641 էջ:

Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջոն Կիրակոսյանի խմբագրությամբ 1972, Երևան, 810 էջ։
Հայաստանի աշխատավորուհի (1991), Երևան, թիվ 3, էջ 2։
Հայաստանի Հանրապետութիւն (1991), մարտի 16։
Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., (Քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու **2000**, Երևան, 455 էջ։
Հովհաննիսյան Ռ. 2016, Հայաստանի Հանրապետություն, հատոր IV, Երևան, 546 էջ։
Մշակ (1920), նոյեմբերի 11։
Չալխուշեան Գ. 1923, Ի՞նչ էր եւ ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 45 էջ։
Սասունի Կ. 1969, Հայ-թրքական պատերազմը (1920-ին), Պէյրութ, 215 էջ։
Վրացյան Ս. 1993, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 704 էջ։
Վրացեան Ս. 2007, Կեանքի ուղիներով, դէպքեր, դէմքեր, ապրումներ, Դ. հատոր, Պէյրութ, 299 էջ։
Տեր Յակոբեան Յ. 1921, Հայաստանի վերջին աղէտը, Կ. Պոլիս, 125 էջ։
Տէրտէրեան Հ. 1954, Հայաստանի Հանրապետութեան եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները, Լեւոն Շանթի պատուիրակութիւնը, մաս առաջին, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիվ 2(336), էջ 14, 19։